մարդավարի կերպով պաշտպանելու ընդունակութիւն չունի: Դարաւոր ստրկութիւնը սովորեցրել է նրան վիզը ծռել եւ խնդրել: Նա չէ կարող իր դժգոհութիւնը յայտնել, առանց ստորացնելու իր անձնաւորութիւնը: Նա կա՛մ այդպէս կվարոէ, կա՛մ բոլորովին կլռէ, ամէն ինչ թողնելով նախախնամութեան կամքին:

— Եւրոպացին, ճանապարհորդելով արեւելքում, ըստ մեծի մասին թողնում է, անցնում է գիւղերը եւ կանգ է առնում միայն քաղաքներում: Եւ որովհետեւ քաղաքներում օրինաւոր հիւրանոցնէր չկան, այլ կան միայն կեղտոտ քարոանսարաներ, այդ պատճառով նա օթեւան է որոնում մասնաւոր տներում: Թուրք կառավարիչները, որպէս յիշեցի, մեծ ուրախութեամբ ընդունում են նրանց իրանց հարկի տակ: Նա չէ մտնում հայ գիւղացու, հայ արհեստաւորի տունը, որոնք իրանց սիրտը, հոգին եւ ամէն ինչ դնում են աստծոյ հիւրի առջեւ, որոնք իրանց նահապետական պարզութեամբ կարող էին հիացնել ամէն մի օտարականին: Եթէ պատահում է եւրոպացուն մի հայի տուն մտնել, անպատճառ դա կա՛մ արքունի ծառայող կը լինէր, կա՛մ մի կապալառու եւ կամ մի հարուստ վաճառական: Ծառայողը, կապալառուն, վատ չէր խօսի այն կառավարութեան մասին, որից ինքը հաց է ստանում: Իսկ վաճառականը ամէն ազգի մէջ՝ ըստ մեծի մասին եսական է, անտարբեր է դէպի հասարակաց թշոառութիւնները: Ցաւալին այն է, որ եւրոպացիները միշտ հայ վաճառականների են հանդիպել, եւ նրանց գլխում մեխի պէս ցցոել է այն սխալ կարծիքը, թէ հայոց ազգը բաղկացած է ամբողջապէս վաճառականներից: Այդ մեխը մինչեւ այսօր անհնար է եղել դուրս քաշել: Այդ է գլխաւոր պատճառը, որ մեր ազգը համեմատում են հրէաների հետ եւ շատ նման են գտնում: Դեռեւս չգիտեն, որ արեւելքում, ուր որ հայեր են բնակւում, արհեստը եւ երկրագործութիւնը գլխաւորապէս նրանց ձեռքումն է, չգիտեն, որ այդ աշխատասէր հայերն են, որ ճնշոած են, հարստահարոած են, եւ իրանց վաստակով կերակրում են իրանց անյագ նեղիչներին:

Ե. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Միւս օրը մենք անհամբերութեամբ սպասում էինք առաջնորդին, որ խոստացել էր փաշան ուղարկել մեզ՝ քաղաքի մէջ եւ նրա շրջակայքում գտնոած հնութիւնները ցոյց տալու համար: Չգիտեմ ի՞նչ պատճառով վարպետ Փանոսը հակառակ էր այդ արշաւանքին: Բայց Ասլանը պնդում էր, թէ ինչ էլ որ պատահելու լինի, անպատճառ պիտի գնալ: